ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №1

2018 թ. սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 2-րդ բ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասվար Արմենուհի Սարգսյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում

1. 2-րդ բ դասարանի ծնողխորհրդի ընտրության հարցը:
2. 2018-2019 ուստարվա խնդիրների ու անելիքների քննարկման հարցը:
3. «Տաք սնունդ» ծրագրին առնչվող հարցերի քննարկում:
4. Ընթացիկ հարցեր (կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

1. Լսեցին. - 2-րդ բ դասարանի ծնողխորհրդի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասվար Արմենուհի Սարգսյանը՝ ծնողներին տեղեկացնելով, որ յուրաքանչյուր ուստարվա սկզբին պետք է ձևավորել ծնողական խորհուրդը, որը կնպաստի սովորողների արտադպրոցական դաստիարակության իրանց ժամանցի և հանգստի կազմակերպմանը, ուսուցման հետ կապված զանազան հարցերի լուծմանը: Այնուհետև ծավալվեց քննարկում:

Առաջադրվեցին հետևյալ թեկնածուները՝

1. Բաղալյան Անի Սեյրանի
2. Անդրեասյան Ժասմեն Մարտիկի
3. Բաղալյան Խանում Սևակի
4. Վարդանյան Անուշ Վարազդատի
5. Պետրոսյան Ռուզաննա Ժիրայրի:

Ձայների մեծամասնությամբ վերոնշյալ ծնողները ընտրվեցին 2-րդ բ դասարանի ծնողխորհրդի անդամներ:

Տեղի ունեցավ նաև ծնողխորհրդի նախագահի ընտրություն: Առաջարկվեց Անի Սեյրանի Բաղալյանի թեկնածությունը: 5 կողմ, 0 դեմ ձայներով Անի Սեյրանի Բաղալյանը ընտրվեց 2-րդ բ դասարանի ծնողխորհրդի նախագահ:

Որոշեցին. – Առաջարկել տնօրենությանը՝ հաստատելու 2-րդ բ դասարանի ծնողխորհրդի հետևյալ կազմը.

1. Բաղալյան Անի Սեյրանի (նախագահ)
2. Անդրեասյան Ժասմեն Մարտիկի (անդամ)
3. Բաղալյան Խանում Սևակի (անդամ)

4. Վարդանյան Անուշ Վարազդատի (անդամ)
5. Պետրոսյան Ռուզաննա Ժիրայրի (անդամ):

2. Լսեցին. - 2018-2019 ուստարվա խնդիրների ու անելիքների քննարկման հարցը:

Ելույթ ունեցավ. դասվար Արմենուհի Սարգսյանը, որը ներկայացրեց 2017 2018 ուստարում 1-ին դասարանի կատարած աշխատանքները ու խոսեց նոր ուստարվա խնդիրների ու անելիքների մասին:

Դասվար Արմենուհի Սարգսյանը հորդորեց ծնողներին նպաստել սովորողների առաջադիմության բարձրացմանը, առանձնացրեց ուսման մեջ թերացող, ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին և նրանց ծնողներին առաջարկեց սերտ կապ պահպանել դպրոցի հետ, որպեսզի ուսուցման և դաստիարակության հետ կապված խնդիրները դրական լուծում ստանան:

Որոշեցին. – Նախորդ ուստարում կատարած աշխատանքները արդյունավետ համարել, աջակցել դասվարին նոր ուստարում արդյունավետ կազմակերպելու սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը

3. Լսեցին. - «Տաք սնունդ» ծրագրին առնչվող հարցերի քննարկման հարցը:

Դասվար Արմենուհի Սարգսյանը ներկայացրեց այն մթերքների ցանկը, որոնք դպրոցին են տրամադրվում ծրագրի շրջանակներում: Նշեց, որ անհրաժեշտ պարագաներ, ինչպիսիքն են մաքրման միջոցները (ամանի հեղուկ, սպունգ և այլն), աղը պետք է ձեռք բերել ծնողական ներդրման միջոցով, որի թույլատրելի չափը ամսական կազմում է 100-300 դրամ: Տեղի ունեցավ քննարկում:

Որոշեցին. – Հավաքել 300-ական դրամ, որպեսզի տաք սնունդ ծրագիրն իրականացվի պատշաճ ձևով:

4. Լսեցին. - Ընթացիկ հարցեր կարգապահության, ռեժիմի, հերթապահության վերաբերյալ:

Օրակարգային հիմնահարցերին անդրադառնալուց հետո քննարկվեցին ծնողներին հուզող այլ հարցեր: Դասվար Արմենուհի Սարգսյանը նշեց, որ սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ են ուսումնական նյութեր, որոնք առանց ծնողների աջակցության հնարավոր չի լինի ձեռք բերել:

Նա նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների լուծման հարցում:

Դասվարը հորդորեց ծնողներին աջակցել դպրոցին, ուսուցիչներին՝ պարտադիր կրթություն իրականացնելու, սովորողների ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար.

Ուսուցիչներին և դասվարին օգնել ձեռք բերել կրթության գործընթացի նորմալ կազմակերպման համար անհրաժեշտ տետրեր (աշխատանքային), օրագրեր, գրենական պիտույքներ

Դասվար Արմենուհի Սարգսյանը տեղեկացրեց, որ նոր ուսումնական տարում դպրոցն աշխատելու է հնգօրյա ռեժիմով, դասերը սկսվելու են 9⁰⁰, ավարտվելու են 13²⁰ րոպեին: Դասվարը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն ժամանակին, պայուսակով, դասագրքերով, գրենական պիտույքներով և աշակերտին վայել հագուկապով:

Պահել ծնող-դասվար-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց:

Որոշեցին. - Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին պատրաստ, աջակցել ուսուցման գործընթացում պարտադիր օգտագործման համար նախատեսված գրենական պիտույքների ձեռքբերմանը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ (Անի Բաղալյան)

Քարտուղար՝ (Ժաստեն Անդրեասյան)